ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2016 թվականի N121-Ա

ՀՐԱՆՏԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու և անցկացնելու մասին» N1201-Ն որոշման և Հրանտ Հարությունյանի անձնական դիմումի, որոշում եմ՝

1. Հրանտիկ Հարությունյանին 2016 թվականի դեկտեմբերի 7-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև արտահերթ ընտրության արդյունքում սահմանված կարգով Վարդավանք համայնքի նորընտիր ղեկավարի կողմից իր պարտականությունների ստանձնումը.

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 6
ք. Կապան